ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում 2018թ. հոկտեմբերի 26-ին ժամը 11:00-ի կայացած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Դ. Գևորգյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետ*
Ա. Սարգսյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ*
Ա. Նիկողոսյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ*
Գ. Աթանեսյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ*
Հր. Գևորգյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար*

Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմը, մարզի բժշկական հաստատություններին տնօրենները, Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳ

1.ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի խոսքն ուղղված մարզի խորհրդին:
2. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների մասին /զեկ. մարզպետի տեղակալ Գ. ԱԹԱՆԵՍՅԱՆ/:
3.Մարզի համայնքներում աղբահանության կազմակերպման գործընթացի մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ/:
4.Մարզի համայնքներում ներդրումային ծրագրեր իրականացնելու և դրանց օժանդակելու մասին (զեկ. մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆ):
5.Համայնքներին սուբվենցիաների տրամադրման և ծրագրերի իրականացման գործընթացի մասին (զեկ. մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆ):
6.<< Իմ քայլը հանուն Արագածոտնի >> միջոցառման հետ կապված կազմակերպչական հարցերի մասին (զեկ. մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆ):
7.Հայտարարություն – Մարզի համայնքներին սերմացուների և դիզվառելիքի տրման, ինչպես նաև համայնքներում անասնաբուժի հաստիքներ սահմանելու մասին (Յու. ԱՋԱՏՅԱՆ):

1. ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 16-ի N 1128 – Ա որոշմամբ ՀՀ Արագածոտնի մարզպետ նշանակված Դավիթ Գևորգյանը իր մասնակցությամբ անցկացվող առաջին մարզխորհրդի նիստի բացման խոսքում կարևորելով հանդիպումը համայնքների ղեկավարների հետ՝ ներկայացրեց այն խնդիրները, որոնք առկա են համայնքներում և առաջնահերթ լուծում են պահանջում: **Դրանցից առաջնայինը արդարության, օրինականության ու հավասարության լիակատար հաստատումն է և մարզում սոցիալ - տնտեսական վիճակի բարելավումը:** Կա հստակ պահանջների առաջադրում, դա է արդարության, օրինականության, ազնվության, հավասարության

հաստատումը մարզում, ուր խրախուսվելու է մարդկային և մասնագիտական բարձր որակների ապահովումը, օրենքի խախտման յուրաքանչյուր դեպքի նկատմամբ դրևորվելու է անհանդուրժողականություն: Մարզպետը իր խոսքում կարևորեց նաև առաջիկայում նախատեսվող Ազգային ժողովի ընտրությունների անցկացման գործընթացը, որը նոր իրավիճակում և նոր իրողությամբ պետք է իրականացվի: Համայնքի ղեկավարը իրավունք չունի իր լիազորությունները ի շահ կուսակցության ծառայեցնելու: Համայնքներում կուտակված են բազմաթիվ խնդիրներ և համայնքապետը պարտավոր է հստակ իմանա այդ խնդիրներն ու լուծում գտնելու ճանապարհները: Մարզպետարանը իր հերթին պատրաստ է լսել և աջակցել այդ խնդիրների լուծմանը: Պետք է աշխատել արտակարգ ռեժիմով:Չկան յուրայիններ և օտարներ: Տարբեր ոլորտներում ապօրինություններ և ամենաթողություն է եղել, և բացառիկ հնարավորություն է ստեղծվել մաքուր էջից սկսելու աշխատանքները, իսկ նախկին սխալներն էլ օբյեկտիվ գնահատել:Պետք է ամեն ինչ անել արդարացնելու ժողովրդի հույսերը:

2. **Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների մասին խոսեց մարզպետի տեղակալ Գ. Աթանեսյանը:** Նա ներկայացրեց վերջին 5 ամիսների ընթացքում իր ուսումնասիրությունների և կատարված աշխատանքների արդյունքները: Նշեց,որ մեծ մասամբ տեղական ինքնակառավարման մարմինները ողջ ծավալով չեն տիրապետում օրենքով իրենց պատվիրակված լիազորություններին: Սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները մարզում գոհացուցիչ չէ: Առանձնացվեց վատ և լավ ցուցանիշներ ունեցող համայնքները: Արագածավան, Սուսեր և Հացաշեն համայնքների ղեկավարները ներկայացրեցին այն պատճառները, որոնց հետևանքով համայնքներում գրանցվել են ամենացածր ցուցանիշները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաջորդ տարվանից համայնքների դոտացիաների տրամադրման կարգում փոփոխություն է լինելու և այն ուղիղ համեմատական է լինելու սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների հետ, համայնքների ղեկավարներին **առաջարկվեց՝ մինչև հաջորդ շաբաթ ապահովել դրական շարժ այս ուղղությամբ:**

3. Քաղաքաշինության վարչության պետ Ա. Դավայանը ներկայացրեց այս ընթացքում մարզում կազմակերպված 2 համապետական շաբաթօրյակի և անցկացված մարզային սանիտարական միամսյակի մասին: Խոսվեց տարածաշրջանում աղբահանության խնդիրների և դրանց լուծմանն ուղղված աշխատանքների մասին: Նախկին 136 աղբավայրից մարզում այժմ գործում է 11-ը: Խոսվեց նաև աղբահանության կազմակերպման գործընթացի մասին: Մարզպետ Դավիթ Գևորգյանը ընդգծեց, որ այս մասով կառավարությունը հստակ ծրագիր ունի, համաձայն որի մշակվում են տեսլականներ աղբահանության և աղբի վերամշակման քաղաքականության վերաբերյալ: Այդ առումով շատ կարևոր է նաև աղբահանության վարձավճարների և պայմանագրերի գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելը: Կարևորվեց նաև աղբավայրերի հողերի նպատակային նշանակության փոփոխության և փաստաթղթային գործընթացի օրինականացման խնդիրները, որի կապակցությամբ հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Հակոբյանի նախաձեռնությամբ **համայնքների ղեկավարներին առաջարկվեց՝**

Մինչև նոյեմբերի 15-ը ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացնել աղբավայրերի համար նախատեսված հողամասերի նպատակային նշանակության փոփոխության և հողհատկացման փաստաթղթերը:

4. Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Իշխան Բարսեղյանը զեկուցեց ներդրումային ծրագրերի իրականացման, սուբվենցիաների տրամադրման գործընթացի արդյունքների մասին: Ծրագրային առաջարկները

հիմնականում վերաբերում են գյուղատնտեսական մթերքի վերամշակմանը, զբոսաշրջության զարգացմանը, անասնապահությանը, մեքենատրակտորային պահեստամասերի արտադրությանը, թեթև արդյունաբերության զարգացմանը: Սուվբենցիայի տրամադրման ծրագրին մարզի 72 համայնքից մասնակցել է 21-ը, որից 4-ը՝ խոշորացված համայնքներ են: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել 37 հայտ, որից հոկտեմբերի 24-ի դրությամբ հավանության է արժանացել 24-ը: Մարզում համայնքների կողմից ներդրումային ծրագրերի աջակցմանն ուղղված խորհրդատվական ելույթում հնչեցին յուրաքանչյուր ծրագրին մեթոդական և բովանդակային օգնություն ցուցաբերելու մարզպետարանի պատրաստակամության մասին:

5.Կարևորվեց՝ ՀՀ Արագածոտնի մարզում կազմակերպվող «Իմ քայլը հանուն Արագածոտնի» խորագրով ներդրումային համաժողովի իրականացման վերաբերյալ :«Իմ քայլը հանուն Արագածոտնի» խորագրով բիզնես-ֆորումի նպատակն է Արագածոտնի մարզի ներդրումային պոտենցիալի ներկայացումը, ինչպես նաև մարզում տնտեսական ակտիվության խթանումը և դրան ուղղված տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Առաջարկվեց ՀՀ Արագածոտնի մարզպերարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին ներկայացնել տեղեկատվություն ծագումով մարզի համայնքներից արտերկրում և Հայաստանում ապրող գործարարների վերաբերյալ: Ֆորումին մասնակցելու հնարավորություն կունենան շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ, գործարարներ և ներդրումներ իրականացնել ցանկացող անձինք: Ֆորումին կմասնակցեն ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի պաշտոնակատար Սուրեն Պապիկյանը և այլ պաշտոնատար անձինք:Նախատեսվում է շեշտադրում կատարել մշակող արդյունաբերության, ՏՏ, ինչպես նաև զբոսաշրջության և գյուղատնտեսության ոլորտների վրա:

6. Մարզի համայնքներին սերմացուների, պարարտանյութերի և դիզվառելիքի տրամադրման, ինչպես նաև համայնքներում անասնաբուժի հաստիքների համալրման գործընթացը ավարտելու մասին հայտարարությամբ հանդես եկավ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանը: Նա կարևորեց նաև բերքահավաքի վերաբերյալ ճշտված տեղեկատվություն ներկայացնելու խնդիրը: Շատ դեպքերում համայնքների ղեկավարները չեն տիրապետում և սխալ տեղեկատվություն են ներկայացնում: Անդրադարձ եղավ նաեւ նոր ինտենսիվ այգիների հիմնման, հակակարկտային ցանցերի, ոռոգման կաթիլային եղանակի ներդրման ծրագրերին:

7. Հայտարարությամբ հանդես եկավ մարզպետի տեղակալ Անահիտ Սարգսյանը, որը համայնքների ղեկավարներին տեղյակ պահեց, որ իր նախաձեռնությամբ և մարզպետարանի սոցիալական բաժնի աջակցությամբ Աշտարակի տարածաշրջանում սկսել են մի գործընթաց, որն ապահովելու է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց անձնագրերի ձեռք բերման աշխատանքները: Խնդրեց, որ համայնքների ղեկավարները իրենց աջակցությունը ցուցաբերեն համայնք այցելող աշխատակիցներին: Ծրագիրի հաջող արդյունքի դեպքում նախատեսվում է այն իրականացնել նաև այլ տարածաշրջաններում:

8. Մարզպետարանի ԿՄՍ վարչության պետի պաշտոնակատար Կ. Սիմոնյանն էլ կարևորեց դպրոց-համայնք կապի արդյունավետությունը, հատկապես 78 դպրոցներում,

որտեղ գործում է ,,Տաք սնունդ,, ծրագիրը: Այդ համայնքներում խիստ կարևոր է համայնքների ղեկավարների աջակցությունը: Համայնքներում կրթության առաջընթացի պարագայում կունենանք հզոր հայրենիք:

9. ՀՀ ՊՆ Արագածոտնի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Մ. Ղազարյանն էլ իր հայտարարության մեջ նշեց, որ նոյեմբերի 1-ից սկսվում է զորակոչի նախապատրաստման երկրորդ փուլը և ցանկալի է, որ համայնքի ղեկավարները այս հարցում աջակցեն իրենց, ծանուցումները ժամանակին զորակոչիկներին հասցնելու և համայնքի զորակոչային տարիքի երիտասարդների մեջ զորակոչից խուսափելու դեպքերը բացառելու նպատակով:

Մարզխորհրդի նիստին հնչեցին նաև այլ հարցեր, որոնց տրվեցին պատասխաններ եւ պարզաբանումներ:

Մարզպետ՝ **ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ**